ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

Ք. Եղեգնաձոր, Շահումյան -5 N_____ հեռ. (374010)28 74 01, (3740281) 2 25 22
<_____> _____2016թ. ֆաքս (374010) 28 18 32

Եղեգնաձորի քաղաքացիական երիտասարդական
կենտրոնի համակարգող ՀՀ քաղաքացի
Լիլիթ Խաչատրյանին

Ի պատասխան 07.12.2016թ. հարցման Ձեզ ենք տրամադրում ՀՀ Վայոց ձորի մարզպետին կից երիտասարդական խորհրդին տրամադրվող տեղեկություններ:

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր գործող երիտասարդական խորհրդի բոլոր այն նիստերի արձանագրությունների և որոշումների պատճենները, որոնք գումարվել են այդ խորհրդի ստեղծումից ի վեր:

ա/ ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդը գումարել է 4 նիստ, որոնց արձանագրությունների և որոշումների պատճեներն ուղարկվում է նամակին կից առդիր էջով:

2. Արդյոք որևէ կերպ հրապարակվել են վերոհիշյալ արձանագրությունները և որոշումները, եթե այո, ապա խնդրում եմ ինձ տրամադրել հրապարակման հասցեները կամ համացանցային հղումները:

բ/ Արձանագրություններն ու որոշումները ինչպես նաև նիստերի օրակարգերը հրապարակվել են ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական /vdzor.mtad.am/ կայքում՝ http://vdzor.mtad.am/Eritxor2/ բաժնում:

3. ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր գործող երիտասարդական խորհրդի կանոնադրության և աշխատակարգի պատճենը, եթե կա այդպիսի փաստաթուղթ:

գ/ Կանոնադրությունը նույնպես ուղարկվում է նամակին կից առդիր էջով:

4. ՀՀ Վայոց ձորի մարզպետին կից գործող երիտասարդական խորհրդի կազմը և անդամներից յուրաքանչյուրի ներգրավման մեխանիզմը, եթե անդամների ներգրավման մեխանիզմը սահմանված է որևէ իրավական ակտով, Խնդրում եմ ինձ տրամադրել այդ իրավական ակտի պատճենը:

դ/ Հի մարզպետներին առընթեր խորհուրդները ձևավորվում են ՀՀ վարչապետի 2014թ. փետրվարի 10-ի հա. 85-Ա որոշմամբ հաստատված օրինակելի կանոնադրությամբ սահմանված կարգին համապատասխան:

Հարգանքով՝ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**

կատարող Ա. Հովհաննիսյան
հեռ. 060712094 /093 826342/